ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
11.09.2023 թ. կնքված N ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/4
գնման պայմանագրի

ք. Երևան «12» « 04» 2024թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է.Էյլազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 11.09.2023 թվականին կնքված N ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 02.04.2024 թվականի թիվ Ն/17486-24 գրության կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի սբ. Սարգիս եկեղեցու և Դ. Բեկ փողոցի միջնամասի այգու բարեկարգման աշխատանքների** համար 2024 թվականի կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 339479568 (երեք հարյուր երեսունինը միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի, 13.09.2023 թվականին կնքված N1 համաձայնագրի՝ պատվիրատուի վավերապայմաններում նշված 900011043339 հաշվեհամարի փոխարեն հիմք ընդունել 900012410487 հաշվեհամարը:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի 2024 թվականի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ՀՀ Սյունիքի մարզ, ք Գորիս Յոլյան 30
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1570015258050100
ՀՀ 900012410487	ՀՎՀՀ 09210321
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Է. Էյլազյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
11.09.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/4 պայմանագրի
«12» «04» 2024 թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հր ավերովնա խատես-վածչափաբ աժնիհամա ը	Գնում ներիպլանովն ախատեսվածմ իջանցիկծածկ ագիրը՝ ըստԳՄԱդաս ակարգման (CPV)	Գնմանենթակ ածառայությունների անվանումը	Աշխատանքներիդիմացվճարումներընախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստամիսների, այդթվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45231270/35	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի սբ. Սարգիս եկեղեցու և Դ. Բեկ փողոցի միջնամասի այգու բարեկարգման աշխատանքներ	.....	.....	.....	237635698	237635698	237635698	339479568	339479568	339479568	339479568	339479568	339479568	339479568

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012410487
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք Գորիս Յոլյան 30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015258050100
ՀՎՀՀ 09210321

Է. Էլյազյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

AMERIABANK

10.04.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.6432.24

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԹԻՎ O.AB.100.12CIB.PIED.0.17341.23 ԵՐԱՇԽԻՔԻ (ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սույնով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 11.09.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/4 պայմանագրից բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 07.09.2023թ. թողարկված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.17341.23 բանկային երաշխիքի (այսուհետ՝ Երաշխիք) 5-րդ կետը վերաշարադրվում է հետևյալ կերպ.

«5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 22 մայիսի 2026թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (vachagan.mejunc@yerevan.am)»:

Երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

10.04.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.6433.24

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԹԻՎ O.AB.100.12CIB.PIED.0.17342.23 ԵՐԱՇԽԻՔԻ
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սույնով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԷԼԴՈԳԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 11.09.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/4 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 07.09.2023թ. թողարկված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.17342.23 բանկային երաշխիքում (այսուհետ՝ Երաշխիք) կատարվում է հետևյալ փոփոխությունը.

«5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 22 մայիսի 2025թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (vachagan.mejunc@yerevan.am):»:

Երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou